

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՍԻԱ  
ՊԼԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՎԼԱԴԻԿԻ

ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ  
ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1915-1924 թթ.)

Է.00.01- «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների թեկնածուի գիտական առիժանի հայցման  
ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2011

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝  
թեկնածու

պատմական գիտությունների

Փաշայան Ա. Ա.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԳԳԻՍԱԽՈՄՆԵՐ՝ պատմական գիտությունների  
դոկտոր Մելքոնյան Է. Լ.

պատմական գիտությունների թեկնածու Գրիգորյան Հ. Բ.

ԱՌԱՋՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011 թ. հոկտեմբերի 7-ին, ժամը 14<sup>00</sup>-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՒՀ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. սեպտեմբերի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Մուրադյան Հ. Ղ.

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆՈՒ ՄՐԳԻՍԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XX դարի սկզբին երիտրուբական իշխանությունների կողմից հայ բնակչությունն իր բնօրրանից բռնի տեղահանվում է սիրիական անապատներ, բանակ գործընթացը հայ տղամարդիկ զինաթափվում ու ոչնչացվում են: Այդ գործընթացը, ինչպես նաև Սիրիայի Դեյր էզ-Զոր, Ռաքքա, Ռաա ուլ-Այն, Համա, Հոնն և այլ բնակավայրերում հայերի զանգվածային համակենտրոնացումն ու անապատներում իրականացրած կոտորածներն անասարկելիորեն վկայում են հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության մասին:

Սիրիայի արաբներն ակամատես են լինում հայերի կոտորածներին ու տեղահանությանը: Հայ տարագիրների պատմությունն այդ ժամանակահատվածում սերտորեն առնչվում է Սիրիայի պատմության հետ: Արաբներն աջակցում են սիրիական անապատներում հայտնված հայ տարագիրներին՝ նրանց մի ստվար հատվածին ցեղասպանությունը վերապրելու հնարավորություն տալով: Հայ-արաբական համագործակցության շնորհիվ տարագիր և տեղաբնակ հայերին հաջողվում է հաղթահարել դժվարությունները, վերածնակորել տեղի հայ համայնքը, աստիճանաբար ներգրավվել ու գործու մասնակցություն ունենալ Սիրիայի սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում:

«Հայ տարագիրները Սիրիայում և հայ-արաբական փոխհարաբերությունները (1915-1924թթ.)» թեմայի ուսումնասիրությունն ունի ինչպես քաղաքական, այնպես էլ գիտական կարևոր նշանակություն: Թեման արդիական է ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլև՝ Մերձավոր Արևելքի հայ համայնքների, մասնավորապես, սիրիահայ համայնքի նոր շրջանի պատմության տարբեր ասպեկտների ավելի համակողմանի ուսումնասիրման տեսանկյունից:

Թեմայի հետազոտությունը կարևոր է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին նպաստող նորանոր փաստեր գիտական շրջանառության մեջ դնելու տեսանկյունից: Այդ գործընթացում խիստ արժեքավոր են արաբական վկայությունները, որոնց քննությունը կարող է նպաստել ոչ միայն Հայոց ցեղասպանության մասին գիտական պատկերացումներն իսկանական, իսկ ավելի ստույգ՝ արաբական սկզբնաղբյուրներով ամրագրելուն, այլև դրանց ընդլայնմանը:

Հետազոտության արդյունքներն, ըստ էության, կարող են օգտակար լինել Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողական քաղաքականությանը հակադրման գործում: Անունափոստության հիմնական դրույթների արաբերեն լեզվով հրատարակումը կարող է որոշակիորեն նպաստել արաբական աշխարհում Հայոց ցեղասպանության վերաբերյալ հասարակական ու գիտական քննարկումների աշխուժացմանը, ինչպես նաև հայ-իսլամական հարաբերությունների պատմական ենթատեքստի վերհանմանն ու արժեվորմանը:

Ֆեդապականության տարիներին հայ տարագիրների նկատմամբ արաբների դիրքորոշման ուսումնասիրությունը կարող է նպաստել Հայաստանում, և, ընդհանարպես, հայկական շրջանակներում արաբական աշխարհի վերաբերյալ պատկերացումների բնութայնմանը: Թեման ոչ սակայն կարևոր է տարբեր մակարդակներում հայ-արաբական շփումների աշխուժացմանը նպաստելու առումով՝ հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ արտաքին քաղաքականության մեջ մերձավորարևելյան ուղղությունն առանձնահատուկ նշանակություն ունի:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Հետագոտել հայ տարագիրներին առնչվող խնդիրները Սիրիա հասնելու պահին՝ քննության նյութ դարձնելով վերջիններիս նկատմամբ Սիրիայի արաբների ունեցած դիրքորոշումը:
- Ուսումնասիրել Էմիր Ֆեյսալի իշխանության /1918-1920թթ./, սալա՝ Ֆրանսիական մանդատի հաստատման առաջին տարիներին /1920-1924թթ./ հայ տարագիրների նկատմամբ իրականացված քաղաքականությունը:
- Քննել նշված ժամանակահատվածում Սիրիայում հայ-արաբական հարաբերությունների զարգացումները: Վեր հանել հայ-արաբական հարաբերությունների ընթացքը պայմանավորող հիմնական գործոնները՝ այդ համատեքստում քննության ենթարկելով Սիրիայի հայ համայնքի վերաձևավորման գործընթացը:
- Ներկայացնել հայ տարագիրներին Սիրիայի արաբների ցույց տրված օգնությունը մաս անհատների մակարդակով, անդրադառնալ հայ տարագիրներին աջակցություն ցուցաբերած շրջանակներին և կազմակերպություններին:
- Վերլուծել Սիրիայում հայ տարագիրների անցած ուղին՝ ցեղասպանությանը հաջորդող շրջանից մինչև 1924թ. քաղաքացիության կարգավիճակ ստանալը, ներկայացնել նրանց աստիճանական ներգրավվումը Սիրիայի սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում:
- Ուսումնասիրել Սիրիայում հայ տարագիրների ինտեգրման հիմնական միտումները, այդ համատեքստում գնահատել Սիրիայի արաբական քաղաքական վերնախառնի դերը հայ-արաբական փոխհարաբերությունների հետագա զարգացման հարցում:
- Քննության ենթարկել հայ տարագիրների ինտեգրման ողջ գործընթացը՝ հաջողություններն ու ձախողումները:
- Անդրադառնալ հայ-արաբական հարաբերություններում առկա լարվածության դրսևորումներին՝ շեշտադրելով 1919թ. փետրվարի Հալեպի դեպքերը, վերլուծել դրա պատճառներն ու հետևանքները:
- Քննության նյութ դարձնել ուսումնասիրվող ժամանակաշրջանում Սիրիայում տեղի ունեցած կարևոր քաղաքական իրադարձությունները՝ դրանք համարելով հայ տարագիրներին առնչվող գործընթացների բաղկացուցիչ մաս:

ԱՏԵՆԱՌՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՈՒ

Միրիայում հայ տարագիրների հաստատվելու, հայերին տեղի արաբների կողմից ցույց տրված աջակցության, հայ-արաբական հարաբերությունների հետագա խորացման, ի վերջո, Միրիայում հայկական համայնքի վերածնակիրման հետ առնչվող խնդիրները գտնվել ու գտնվում են ոչ միայն հայ, այլև՝ օտար հեղինակների գիտական հետաքրքրության տեսադաշտում: Նշված խնդիրների վերաբերյալ կան բազմաթիվ հետազոտություններ, սակայն հիշյալ ուսումնասիրությունն՝ իր ձևով և բովանդակությամբ, նոր խոսք է ոչ միայն ցեղասպանագիտության և արևելագիտության, այլև՝ Հայկական սփյուռքի պատմության ուսումնասիրության ոլորտներում: Առենախոսության գիտական նորույթը պայմանավորված է մի շարք կարևոր հանգամանքներով:

- Առենախոսության շարադրման ընթացքում օգտագործվել են մինչ այժմ գիտական շրջանառության մեջ չդրված մի շարք արխիվային փաստաթղթեր:
- Աշխատանքում օգտագործվել են արաբական նոր և նորագույն շրջանի պատմագիտության նյութեր, արաբ հեղինակների՝ հայկական թեմաներին վերաբերող հիմնական աշխատանքները, որոնց մի մասն առաջին անգամ են ներկայացվում հայերեն լեզվով:
- Հետազոտվել է հայ տարագիրների և դրանց նշանակությունն ու կարևորությունը հայ համայնքի վերածնակիրման գործընթացում:
- Վերլուծվել են հայ-արաբական փոխհարաբերություններում գրանցված լարվածության պատճառները:

ԱՏԵՆԱՌՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՆՔԱՆՆԵՐԸ

Առենախոսությունը ժամանակագրական առումով ներառում է 1915-1924թթ.՝ Հայոց ցեղասպանության հետևանքով տարագիրների՝ Միրիայում հայտնվելուց մինչև 1924թ. հունիսին «Նանսեյան անձնագրերի», իսկ նույն թվականի օգոստոսին Միրիայի քաղաքացիության ձեռք բերումը:

Անհրաժեշտ է նշել, որ հետազոտության համար ընտրված ժամանակահատվածում՝ 1915-1924թթ., Միրիա եղբայրները ընդգրկել է ոչ միայն ներկայիս Միրիայի Արաբական Հանրապետությունը (ՄԱՀ), այլ նաև ներկայիս Լիբանանի Հանրապետությունը և Հորդանանի Թագավորությունը, այսինքն՝ պատմաաշխարհագրական Միրիան (Բիլադ Աշ-Շամ): Սակայն, քանի որ ցեղասպանության և դրան հաջորդող առաջին տարիներին հիմնական դեպքերը ղեկավարվել են ներկայիս ՄԱՀ-ում, նպատակահարմար ենք գտել սահմանափակել հետազոտության աշխարհագրությունը հենց այդ շրջանակում:

ԱՏԵՆԱՌՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՈՒՄ

Առենախոսության հիմքում ընկած են վերլուծական, պատմաքննական, ինչպես նաև պատմահամեմատական և համադրական մեթոդները: Յուրաքանչյուր է համալիր մոտեցում՝ դեպքերն ու իրադարձություններն առավել ամբողջական ու համակողմանի ներկայացնելու

համար: Համարովել են խնդրին վերաբերող արաբական ու հայկական աղբյուրները, զուգահեռներ են տարվել հայ և արաբ ժողովուրդների պատմության միջև: Բովանդակային վերլուծության է ենթարկվել մեծ թվով գրականություն՝ սկզբնաղբյուրների, հուշագրությունների, փաստաթղթերի ժողովածուների ու մեկագրությունների տեսքով:

### ԱՏԵՆԱԽՈՍՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել Հայոց ցեղասպանության պատմության հիմնահարցերին նվիրված ուսումնասիրությունների համար:

Աշխատանքում տեղ գտած որոշ դրույթներ կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետության պետական համապատասխան մարմիններում Սիրիայի վերաբերյալ քաղաքական մտեցումների մշակման, ինչպես նաև վերլուծական նյութերի պատրաստման տեսանկյունից: Դրանք կարող են օգտագործվել նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտական դասընթացներում:

### ԱՏԵՆԱԽՈՍՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ՊԱԱ ՀՏԹԻ-ի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած չորս հոդվածներում:

### ԹԵՍԱՅԻ ՌԲՍՈՒՄՆԱՄԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության մեջ օգտագործել ենք հայկական, արաբական, ինչպես նաև գերմանական, ամերիկյան աղբյուրներ ու պատմական աշխատություններ, փաստաթղթերի ժողովածուներ, որին զուգահեռ ներկայացվել են հայ և օտարագրի սկանատեսների հուշագրություններ ու վկայություններ:

Սիրիայում ապաստանած հայ տարագիրների կեցության, արաբների ցուցաբերած օգնության, նրանց սոցիալական, քաղաքական կյանքի վերաբերյալ աղբյուրագիտական նշանակություն ունեն վկայությունները<sup>1</sup>: Օգտագործվել են նաև Սիրիա հասած հայ տարագիրների մեծ թվով հուշագրություններ և օրագրեր,<sup>2</sup> որտեղ անդրադարձ է կատարվել

<sup>1</sup>1915. Ադետ եւ վերածնունդ, Փարիզ, 1952, Տեր-Ջօր, Ադետն վերապրողներ, Փարիզ, 1955:

<sup>2</sup>Մուշեղ Սերոբեան, Գիտումներ և դատումներ, էջեր օրագրես, Պէյրուք, 1932, Առնակ, Թուրքերու ճանկին մեջ, 1916-1919, Երևան, 2007, Մարտիկեան Յ., Թրքական դժիքից նացիական դժիք, Պէյրուք, 1973, Կիշոյիյան Հ., Կեր Ջորի անապատներում, Երևան, 2006, Տոնիկեան Յ. Կիրակոս /Կ. Կիլիկեցի/, Կեսանիա Յուշերը 1900 -1972, Պէյրուք, 2004, Սատուցի Մ., Սեւ օրագիր, Պէյրուք, 1957, Սարաֆյան Գ., Եփրատից Ռիո Դե Լա Պլատա, Երևան, 2002, Աբեղեան Գ., Յկեանս նահատակութիւն, Այնճար, 2005:

արաբներին, նրանց վերաբերմունքին՝ դրական կամ բացասական կողմերով: Նյութը լրացնում են հայ տարագիրների իրական վիճակը ներկայացնող տարեցույցները,<sup>3</sup> տարեգրքերը,<sup>4</sup> այդ ժամանակահատվածում Սիրիայում գործունեություն ծավալած քաղաքական, դիվանագիտական ծառայության մեջ զանվող անձանց, միսիոներների հուշագրությունները:<sup>5</sup> Իրենց նշանակությամբ և կարևորությամբ հարկ է առանձնացնել դանիուհի միսիոներ Կ. Եփիեի գործունեությունը, որի մասին տեղեկանում ենք Հ. Չոլաքյանի աշխատությունից:<sup>6</sup> Արքայազնական նշանակություն ունեն հայտնի որբախույզ Ռ. Հեղյանի անվանական ֆոնդում եղած նամակները, դիմում-խնդրանքները, նրա կատարած որբահավաք գործունեությունն անվտանգ հաշվետվությունները:<sup>7</sup>

Կարևոր արքայազնական նշանակություն ունեն Կիլիկիո Տան Սահակ Բ կաթողիկոսի՝ Սիրիայում ծավալած գործունեության վերաբերյալ նյութերը,<sup>8</sup> նամակներն ու տեղեկագրերը:<sup>9</sup> Ոչ պակաս կարևոր է նաև Չիլինկիրյան Եղիշե եպիսկոպոսի հուշագրությունը:<sup>10</sup> Հայեպի արքեպիսկոպոս Ա. Սյուրմեյանն /1925-1940/ իր «Պատմութիւն Հայէպի Հայոց»<sup>11</sup> եռահատոր աշխատության մեջ անդրադարձել է Սիրիայում ապաստանած հայ տարագիրների խնդիրներին: Առենախոսության նյութը համարվել է նաև այդ քվականներին Հայեպում և Ադանայում լույս տեսնող մամուլի հոդվածներով:<sup>12</sup> Ցեղասպանությունը վերապրած հայերի խնդիրներին է անդրադարձել Ս. Վարժապետյանը,<sup>13</sup> տարագիրների իրավական կարգավիճակի փոփոխություններն է ներկայացրել Շ. Գույումջյանը,<sup>14</sup> Շ. Թորիզյանը:<sup>15</sup>

<sup>3</sup> «Սորիսհայ տարեցոյց», Գահիրե, 1924, «Սորիսհայ տարեցոյց», Հայէպ, 1925:

<sup>4</sup> «Տարե» տարեգիրք, Հայէպ, 1926, «Գեղարք», Հայէպ, 1978, 1976-1978 միացեալ թիվ, հ. Բ, «Երբ», Բերլին Հայոց թեմ, Սորիսհայ տարեգիրք, Հայէպ, 2006, հ. 2:

<sup>5</sup> Ambassador Morgenthau's story, By Henry Morgenthau, NY, 1918, Künzler J., Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges /1914-1918/, Zürich, 1999, Burt J., The people of Ararat, London, 1926, The Horrors of Aleppo, seen by a German eyewitness, London, 1917.

<sup>6</sup> Չոլաքյան Յ., Քարեն Եփիե, Հայ գրողության և վերածնունդին հետ, Հայէպ, 2001:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 420:

<sup>8</sup> Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 420, ց. 9:

<sup>10</sup> Չիլինկիրեան Եղիշե եպիսկ., Նկարագրութիւնը Երուսաղէմի-Հայէպի-Դանակոսի գաղթականական և վանական զանազան դիպված և անցքերու 1914-1918, Երուսաղէմ, 1927:

<sup>11</sup> Միլոմեան արք. Ա., Պատմութիւն Հայէպի Հայոց, Հայէպ, 2002, հ. Ա, Պատմութիւն Հայէպի Հայոց, Հայէպ, 2003, հ. Բ:

<sup>12</sup> «Հայ ձայն», Հայէպ, 1918-1919. «Կիլիկիա», Ադանա, 1918-1919, «Եփրատ», Հայէպ, 1927-1928:

<sup>13</sup> Վարժապետեան Ա. Յ., Հայերը Լիբանանի մէջ, հ. Բ, Պէյրութ, 1981:

<sup>14</sup> Գույումճեան Շ., Քննութիւն 1941-ի, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի տանն Կիլիկիոյ «Կանոնագրութեան», Պէյրութ, 1955:

<sup>15</sup> Torigyan Sh., The Armenian Question and International Law, Beirut, 1973.

Միրիայում ապաստանած հայ որբերի խնդիրների լուսաբանման համար կարևոր է Լ. Ազատյանի եռսահատոր ուսումնասիրությունը:<sup>16</sup> Հայ որբերի ու կանանց ազատագրման խնդիրների համար արժեքավոր նյութ է պարունակում Է. Սեյրոնյանի աշխատությունը<sup>17</sup> և ՀԲԸՄ-ի «Ոսկեմասայան» ժողովածուն:<sup>18</sup>

Մեզ հետաքրքրող խնդրի լուսաբանման ուղղությամբ մեծ ավանդ ունի պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, ով հիմք է դրել արաբական պատմագրության՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ աշխատությունների գիտական ուսումնասիրությանը:<sup>19</sup> Մշակամասառուկ կարևորություն է ներկայացնում հեղինակի 2009թ. հրատարակած Հայոց ցեղասպանության մասին աշխատությունը:<sup>20</sup>

Առենախոսության մեջ օգտագործվել են նշված ժամանակահատվածում հայ ազգային քաղաքական կուսակցությունների գործիչների աշխատությունները: Այս առումով կարևոր են Մ. Աղազարյանի,<sup>21</sup> Ա. Կենճեյանի,<sup>22</sup> Ա. Սիկոյի,<sup>23</sup> Վ. Նավասարդյանի<sup>24</sup> աշխատությունները:

Առենախոսության թեմայով հիմնարար ուսումնասիրություններ են կատարել Հ. Թովուզյանն<sup>25</sup> ու Ն. Միզիորինոն:<sup>26</sup> Հ. Թովուզյանի ուսումնասիրության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1841-1946թթ.: Նա ներկայացրել է Միրիայի և Լիբանանի հայ համայնքների պատմությունը մինչև ցեղասպանությունը, անդրադարձել է ցեղասպանության տարիներին տեղի ունեցած իրադարձություններին ու հայ համայնքների պատմությանն՝ ընդհուպ 1946թ.: Ն. Միզիորինոյի ուսումնասիրությունը հիմնականում ունի էթնոշակութային և սոցիալական ուղղվածություն: Հեղինակը փորձել է համեմատական եզրեր տանել Միրիայում և Լիբանանում հայ տարագիրների ինտեգրման փուլերի միջև: Նա ներկայացրել է Միրիայի և Լիբանանի համայնքների պատմությունը մինչև մեր օրերը, անդրադարձել է

<sup>16</sup>Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անճելոս, 1995, հ.1, Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անճելոս, 1999, հ. 2, Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անճելոս, 2002, հ. 3:

<sup>17</sup>Սեյրոնյան Է. Լ., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005:

<sup>18</sup>Ոսկեմասեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 1906-1931, Բարիզ, 1935:

<sup>19</sup>Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագրության քննական լույսի ներքո, Երևան, 2004:

<sup>20</sup>Hovhannisyann N., The Armenian Genocide, Yervan, 2009.

<sup>21</sup>Աղազարեան Մ., Սփի վերջին աթոռակարը եւ իր մեղապարտ գաւառականը, Պէյրոս, 1926:

<sup>22</sup>Կենճեան Ա., Սօցիալ-դէմօկրատ Հնչակեան կուսակցութիւնը եւ Կիլիկեան իրքնակարութեան արքրը 1919-1921, Պէյրոս, 1958:

<sup>23</sup>Սիկոյ Ա., Սուրիա եւ մենք, Գահիրէ, 1932:

<sup>24</sup>Նավասարդեան Վ., Գաշնակցութեան քաղաքական ուղին, Գահիրէ, 1925:

<sup>25</sup>Թովուզյան Հ., Միրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն /1841-1946/, Երևան, 1986:

<sup>26</sup>Nicola Migliorino. (Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, Studies in Forced Migration, vol. 21, Oxford, 2008.



այդ շրջանում ձևավորված սոցիալական շերտերին, նրանց՝ Սիրիայի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքին ինտեգրվելու միտումներին, գրանցված խոչընդոտներին ու հաջողություններին:

Հետազոտության համար հարուստ փաստագրական նյութ են պարունակում տվյալ ժամանակահատվածին վերաբերող գերմանական<sup>27</sup> և ամերիկյան<sup>28</sup> փաստաթղթերի ժողովածուները:

Հետազոտության շրջանակներում առաջ քաշված հիմնախնդիրների լուսաբանման համար կարևոր նշանակություն են ունեցել ցեղասպանագիտական աշխատությունները, ինչպես օրինակ Վ. Դադրյանի,<sup>29</sup> Լ. Կուպերի,<sup>30</sup> Ռ. Մելսոնի,<sup>31</sup> Թ. Աքչամի,<sup>32</sup> և այլոց աշխատությունները: Հայ տարագիրների, որպես համայնք, կայացման խնդիրների ուսումնասիրություն համար շահեկան են եղել Վ. Դյատլովի և Է. Մելքոնյանի,<sup>33</sup> Ս. Դյուֆոիսի<sup>34</sup> և Գ. Շեֆերի<sup>35</sup> աշխատությունները:

Հայոց ցեղասպանության և հայ տարագիրների խնդիրներն ուսումնասիրել են նաև արաբ հետազոտողները: Վերջին 25-30 տարիների ընթացքում առանձին արաբ պատմաբանները հետաքրքրություն են ցուցաբերել հայ ժողովրդի, ինչպես նաև Հայոց ցեղասպանության պատմության նկատմամբ:

Հարցն ուսումնասիրելու համար առաջին հերթին կարևոր են արաբական սկզբնաղբյուրների, նաև պատմաբանների աշխատությունների վերլուծությունն ու ուսումնասիրությունը: Ժամանակագրական առումով կարելի է առանձնացնել փաստաբան, Խարբերդի կառավարիչ Ֆայեզ Ալ-

---

<sup>27</sup>Deutschland und Armenien.1914-1918, Sammlung diplomatischer aktenstucke herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Bremen, 1986.

<sup>28</sup>United States official records on Armenian Genocide 1915-1917, compiled with an introduction by Ara Sarafyan, London, 2004.

<sup>29</sup>Dadrian V., The History of the Armenian Genocide, NY, Oxford, 1995.

<sup>30</sup>Kuper L., Genocide. Its Political Use in Twentieth Century, New Haven and London, 1981.

<sup>31</sup>Melson R., Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust, Chicago and London, 1992.

<sup>32</sup>Akcam T., A shameful Act, The Armenian Genocide and Question of Turkish Responsibility, London, 2007.

<sup>33</sup>Дятлов В., Мелконян Э., Очерки социокультурной типологии. Армянская диаспора, Ер., 2009.

<sup>34</sup>Dufoix St, Diasporas,nodnoL., Berkeley and Los Angeles, 2008.

<sup>35</sup>Sheffer G., Diaspora politics, At home Abroad, NY, 2003.

Դուսեյնի<sup>36</sup> հուշագրությունները՝ «Ջարդերը Հայաստանում» /«Ալանատեսի վկայություններ»/<sup>37</sup> և «Ճնշումներ Սիրիայում, Իրաքում և Հիջազում»:<sup>38</sup>

Արժեքավոր տեղեկություններ կան դեսպերի ժամանակակից մի շարք արաբ գործիչների հուշագրություններում: Սիրիացի քաղաքական ու մշակութային գործիչ Մուհամմադ Քուրդ Ալին<sup>39</sup> (1876-1953) իր քառասատոր «Հուշեր»<sup>40</sup> աշխատությունում անդրադառնում է երիտթուրքական կառավարության հայերի նկատմամբ վարած քաղաքականությանը: Իր մյուս՝ «Շամի ծրագրերը»<sup>41</sup> վեց հատորանոց գրքի երրորդ հատորում մանրամասներ է հարողրում հայերի տարագրության մասին:

Թեմայի ուսումնասիրության համար նաև մեծ կարևորություն և սկզբնաղբյուրային նշանակություն են ունեցել Ն. Արիսյանի խմբագրությամբ «Հայոց ցեղասպանության արձագանքները սիրիական մամուլում 1877-1930թթ.»,<sup>42</sup> և Ա. Քեչիշյանի խմբագրությամբ «Հայկաի «Աք-Թակադդում» թերթի վավերագիր էջերը հայերի և արաբների վիճակի մասին Օսմանյան պետության մեջ և Սիրիայում»<sup>43</sup> թերթերից կատարված ծաղկաբաղը:

Սկզբնաղբյուրային նշանակություն ունի նաև Ն. Արիսյանի մեկ այլ աշխատություն՝ «Հայկական սարսափները սիրիական մարզում. սիրիացի մտավորականների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում»<sup>44</sup> գիրքը: Հեղինակը ներկայացրել է արաբ ակնմատենների, աշխրաթների առաջնորդների, նրանց հետևորդների հետ ունեցած իր հանդիպումների ու հարցազրույցների ընթացքում նրանց պատմած մանրամասները:

<sup>36</sup>Ֆայեզ Ալ-Դուսեյնը Հաուրանի շրջանի արաբական Մուլոթ ցեղին էր պատկանում: Երեք տարի Խարբերում զբաղեցնելով կայմակափ պաշտոնը՝ հնարավորություն է ունեցել մանրամասն ծանոթանալ դեսպերին ու ակամայից ակնմատես լինել հայերի դժբախտությանը: 1915թ. հրաման է ստացել մեկնել Էրզրում, սակայն Գիարբեքիում մեկուկես ամիս ձերբակալված է եղել:

<sup>37</sup>1991, *فائز العسبين، المذابح في أرمينيا، حلب*, լույս է տեսել 1917թ. Բուրբեյում, գրեթե միաժամանակ թարգմանվել և տպագրվել է նաև անգլերեն, գերմաներեն և հայերեն:

<sup>38</sup>1918 *فائز العسبين، المظالمت سوريا و العراق و حجاز العقبان*

<sup>39</sup>1920թ. ստանձնել է Սիրիայի Գիտությունների նախարարության աշխատանքների կառավարման գործը, հիմնել է Արաբական գիտությունների խորհուրդը՝ երկար տարիներ վարելով վերջինիս տնօրենի պաշտոնը: 1908թ. Դամասկոսում սկսել է հրատարակել ու խմբագրել է «Ալ-Մուքթաբա» օրաթերթը, որը համարվում է այդ շրջանի ազատ ոճի լավագույն թերթը: Դրանում տպագրվել են հայերի տեղահանությունների, Սիրիայում նրանց հաստատման և բխարանակի հետ կապված նյութեր:

<sup>40</sup>1949, *محمد كرد علي، منكرات، دمشق، الجزء الثالث*

<sup>41</sup>1983 *محمد كرد علي، خطط الشام، دمشق، الجزء الثالث*

<sup>42</sup>أريسيان نورا، *أصدأ الأبلدة الأرمينية في الصحافة السورية 1877-1930*، بيروت، 2004.

<sup>43</sup>صفحت و وثلق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الأرمينية والعربية في الدول العثمانية والبلدان الشلمية، حلب، 1992.

<sup>44</sup>1991 *أريسيان نورا، غوائل الأرمين في الفكر السوري، دمشق، 2002*

Հայոց ցեղասպանության պատմության համար կարևոր են նաև լիբանանցի պատմաբան Սայեհ Զահր Ալ-Դիմի<sup>45</sup> սիրիացի պատմաբան Նայիմ Ալ-Յաֆֆիի աշխատությունները,<sup>46</sup> վերջինիս «Արաբների ու հայերի պայքարն ընդդեմ Օսմանյան գաղութատիրության»<sup>47</sup> աշխատությունը, որի համահեղինակն է Խալիլ Ալ-Մուսան, ևս վերաբերում է մեզ հետաքրքրող թեմաներին:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ արաբական պատմագրության մեջ իրենց կարևոր տեղն ունեն նաև սիրիացի հրապարակախոս Մամիր Արբաշի «Հայաստան, հող և ժողովուրդ»,<sup>48</sup> սիրիացի պատմաբաններ Օսման Աբ-Թուրքի «Էջեր հայ ժողովրդի պատմությունից»,<sup>49</sup> և Միսլան Ալ-Մուխսուարի «Հայերը պատմության ընթացքում»<sup>50</sup> աշխատությունները:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի Մուսա Պրենսի «Հայոց ցեղասպանություն. մարդկության դեմ իրագործված ոճրագործություն» աշխատությունը:<sup>51</sup> Մ. Պրենսի հետ է կապված «արմենոցիք» «հայասպանություն» եզրի ներդրումը գիտական շրջանատության մեջ:

Առեմնախոսության շրջանակներում Սիրիայի այդ ժամանակահատվածի պատմական դեպքերին առավել մանրամասն տեղեկանալու համար օգտվել ենք Ա. Սաիդի,<sup>52</sup> Է. Թունայի,<sup>53</sup> Ս. Ալիի,<sup>54</sup> Ն. Հովհաննիսյանի<sup>55</sup> և Ա. Սանջյանի<sup>56</sup> աշխատություններից:

---

<sup>45</sup> صالح زهر الدين، سياسة الحكومة العثمانية في أرمينيا الغربية، وموقف القوى الدولية منها، بيروت، 1996

<sup>46</sup> صالح زهر الدين، الأرمن-شعب وقضية، بيروت، 1988

<sup>47</sup> صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الأرمني، بيروت 2002

<sup>48</sup> نعيم اليافي، مجازر الأرمن وموقف الرأي العام العربي منها، اللائقية، 1992

<sup>49</sup> نعيم اليافي، جمل بلثا الصفا، اللائقية، 1992

<sup>50</sup> نعيم اليافي، خليل موسى، فضل العرب و الأرمن ضد الاستمثار العثمانية، اللائقية، 1995

<sup>51</sup> سمير عريش، أرمينيا، أرض وشعب، بيروت، 1991

<sup>52</sup> عثمان الترك، صفحت من تاريخ الأمة الارمنية، حلب، 1960

<sup>53</sup> مروان الموار، الأرمن عبر التاريخ، بيروت، دار الحياة، 1982

<sup>54</sup> موسى بوش، مجازر الأرمن. جرائم ضد الإنسانية، حلب، 1997

<sup>55</sup> Саид А., Восстание арабов в XXв., Москва, 1964.

<sup>56</sup> Тума Э., Национально-освободительное движение и проблема арабского единства, Москва, 1977.

<sup>57</sup> سلطان علي، تاريخ سورية، نهاية الحكمة التركي، 1908-1918، دمشق، 1996

<sup>58</sup> سلطان علي، تاريخ سورية، حكم فيصل بن حسين 1918-1920، دمشق، 1996

<sup>59</sup> Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում, 1917-1946/, Երևան, 1975:

<sup>60</sup> Sanjian A., The Ammanian Communities in Syria under Ottoman Dominion, Cambridge, Massachusetts, 1965.

*ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

Առեմախոսությունը բաղկացած է առաջաբանից, չորս գլուխներից, եզրակացությունից ու օգտագործված գրականության ցանկից:

*Առաջաբանում*՝ հիմնավորվում է թեմայի արդիականությունն ու նշանակությունը, նախատկն ու խնդիրները, ներկայացվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը, սարգսբանվում են աշխատանքի մեթոդական հիմքը և գիտական նորությունը:

Աշխատության *առաջին գլուխը՝ «ՀԱՅ ՍԱՐԳՍԵՐՆԵՐԻ ՀՈՍԲ ՄԻՐԱ ԵՎ ԱՐԱՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄՆԵՐԸ»*, բաժանված է երկու ենթադիվի և ներկայացնում է սիրիական անապատներ հասած հայ տարագիրների ու արաբների փոխհարաբերությունների առաջին փուլը, անդրադարձ է կատարվում հայ որբերի, կանանց հավաքագրման աշխատանքներին:

*Առաջին ենթագլուխը՝ «Հայ տարագիրների առաջին խմբերը Մյրիայում»*, ներկայացնում է երիտթուրքական կառավարության հայերի տեղահանությունն ու կոտորածների իրականացման քաղաքականությունը: Ցույց է տրվում, որ դրա հետևանքով Հայեսթ, Դամասկոսը, Հատրանը, Համան վերածվել էին համակենտրոնացման վայրերի, որտեղ հայ տարագիրները բախվում էին բազմաթիվ դժվարությունների՝ սով, հիվանդություններ, կլիմայական անբարենպաստ պայմաններ: Դեռ ալեյին՝ վերապրողների մի մասն անցնում էր տարագրության՝ «անապատից անապատ» փուլը:

Արաբ բնակչությունն իր աջակցություն է ցուցաբերում սիրիական անապատներ հասած հայ տարագիրներին: Ասվածի սպացույցն է 1915թ. սեպտեմբերի 9-ի Նեքքին գործերի նախարար Թալեաթի՝ Հալեայի նահանգապետարան ուղղված հեռագիր-իրահանգը, որը պահանջում էր կանխել տեղի բնակչության կողմից հայերին ցուցաբերվող աջակցության փորձերը: Սեկ այլ հեռագրով՝ հայերին օգնելու դեպքում արաբների համար մահապատիժ էր սահմանվում:<sup>57</sup> Այրուհանդերձ, արաբները ելքեր էին փնտրում հայերին օգնելու համար: Մինչև 1915թ. հուլիսի վերջը Հալեայի նահանգում տեղահանության հրամանը չի գործադրվել արաբ նահանգապետ Ջալալ բեյի շնորհիվ: Վերջինս Հալեայում գործող «Գաղթականների օգնության հանձնախմբի», հայ տարագիրների տեղափոխման հարցերով զբաղվող այլ մարմինների գործունեության համար նպաստակոր պայմաններ էր ստեղծում:

Հալեայի Ժոզեֆ Թաուբելը,<sup>58</sup> ով դեպքերի բերումով 1916-1918թթ. եղել է Դեյր Էզ-Չորում, ակնատես է եղել հայերի սարսափների: Նա համագործակցել է Հալեայի ամերիկյան հյուպատոս Ջ. Ջեքսոնի հետ: Վերջինս բարեգործական կազմակերպությունների նպատակներն ու օժանդակությունները Թաուբելի միջոցով փոխանցում էր հայ տարագիրներին:

57. 88. نعيم الياقي، خليل الموسى، نضل العرب و الارمن ضد الاستعمار العثمانية، ص 88.

58 Ժոզեֆ Թաուբելի հուշերն առաջին անգամ լույս են տեսել Բեյրութի «Ալ-Մաշրեք» հանդեսում, 20-րդ տարի, թիվ 6, հունիս, 1922, էջ 562-570:

Անգամ որոշ հայ տարագիրների թատրոնն է թաքցրել: Ռաս ուլ-Ալնի կայանական Յուսուֆ Չիլա բեյը պարբերաբար հեռագրեր էր ուղարկում Հալեայ՝ խնդրելով, որ այլևս քարավաններ չուղարկեն, քանի որ անհնար էր դարձել հոգ տանել ու պատասխարել նրանց: Ռաքքայի կտավարդիչ հալեացի Ֆեհմին նույնպես աջակցել է տեղի հայ տարագիրներին:

Երիտթուրքական կառավարության՝ հայերի նկատմամբ վարած ոչնչացման քաղաքականության հետևանքով Սիրիա հասած հայ տարագիրներին արաբների ցուցաբերած օգնությունը ոչ միշտ է մարդասիրական բնույթ կրել: Արաբների այն մտավախությունն ունեին, որ հայկական կոտորածներին կարող էին հաջորդել արաբների ջարդերը:

Երկրորդ ենթապոյնիսը՝ «Պրահայի վախատանքները, կանանց հավաքագրումն ու սպասարանների հիմնումը», անդրադառնում է սիրիական անապատներում գտնվող հայ երեխաների ու կանանց դրությանը, վերջիններիս հայկական միջավայր վերադարձնելուն ուղղված քայլերին և այդ գործընթացում արաբների մասնակցությանը:

Հայ որբերին պատասխարելու առաջին քայլերն անում են տեղի հայերը: 1915թ. հունիսի 15-ին Ա. Շիրանյանը Հալեայի Ագապա թաղամասում որբանոց է բացում: Հայ որբերի համար որբանոց է հիմնվել նաև արաբական կողմի ջանքերով: Սիրիացի մուսուլման կոռնակոր, շեյխ Աբդալլահ Մուսային չորս ամսվա ընթացքում ծնողազուրկ հայ երեխաների համար որբանոց է կառուցել Համա թաղաքում: Որբախնամ գործունեությանն աջակցել է նաև Դամասկոսի վալի թահսին բեյը: Հալեայում արաբների հետ համագործակցել են նաև Օմիկ և Արսեն Մազումյան եղբայրները, ովքեր օգտագործում էին տեղական իշխանությունների հետ իրենց կապերը՝ սիրիական անապատներից Հալեայ տեղավորվելով բազմաթիվ հայ տարագիրների: Առավել համատարած բնույթ է կրել արաբների կողմից հայ որբերի ու կանանց հավաքագրման աշխատանքներում հայկական կամավորական փոքրաթիվ ջոկատներին ու անհատներին ցուցաբերած օգնությունը:

Հայ որբերին աջակցելու համար մեծածավալ աշխատանք են տարել տարբեր միջազգային ու հասարակական կազմակերպություններ: Հարկ է նշել, որ Սիրիայում հայ որբերին և, ընդհանրապես, հայ տարագիրներին փրկելու գործընթացում լինեն դրանք անհատ մարդիկ, հայկական կամ միջազգային կազմակերպություններ, դժվար կլինեք արդյունքի հասնել, եթե չլինեք արաբական կողմի միջամտությունն ու օգնությունը:

Ատենախոսության ընթացքում անդրադարձ է կատարվել նաև արաբների ոչ բարյացակամ վերաբերմունքի դրսևորումներին, բռնությունների կիրառման դեպքերին, սակայն, հարկ է նշել, որ դրանք հիմնականում ունեցել են անհատական բնույթ: Արաբների նման վերաբերմունքը կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ երիտթուրքական իշխանությունները փորձել են արաբ բնակչության որոշակի հատվածի մոտ առաջացնել հակահայկական տրամադրություններ՝ շահարկելով վերջիններիս կոռնական զգացմունքները, իսկ այս պարագայում վկայակոչելով նաև իսլամը, ինչպես նաև հայտարարված ջիհադը:

Ատենախոսության շրջանակում անդրադարձ է կատարվում նաև հայ որբերի ու կանանց արաբացած շրջանակների խնդրին: Վերջիններս, որոշ

դեպքերում համակերպվում էին արաբների սովորություններին ու բարքերին: Այդ իրողությունը բարդացնում էր նրանց՝ այդ միջավայրից հեռացնելն ու հայկական ինքնության վերադարձնելու գործընթացը: 1924թ. Աշխատանքի միջազգային գրասենյակը ջարդերից փրկված երեխաների վերաբերյալ կատարած ուսումնասիրության մեջ նշում է, որ նրանք շրջակա միջավայրին այնքան էին ադապտացվել, որ դժվար էր նրանց արաբներից տարբերել:<sup>59</sup> Ներկայացվել են նաև կանանց և երեխաների՝ հայկական միջավայր վերադառնալու գործընթացի բարդությունները: Այնուամենայնիվ, արաբների մոտ ապաստան գտած և հայերի մոտ վերադարձած երեխաներից ու կանանցից շատերը կարողացել են հաղթահարել առկա խնդիրներն ու շարունակել իրենց կյանքը հայկական միջավայրում:

*Երկրորդ գույխը՝ «ՄԵՐՄՆՅՈՒ ՄՐԱԲՆԵՐԻ ԶԻՔՐՈՐԾՈՒՄԸ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿՍՏԱՍԻՐ ԵՎ ՍԵՔՐԵՅԻ ՇԵՒՖՈՒ ԷՍԻՐ ԱԼ-ՀՈՒՆԵՅՆԻՔՆ ԱԼԻՔԻ ՈՒՂԵՂՆԵՐԸ», բաղկացած է երեք ենթապլուխներից, որտեղ ներկայացվում է Սեքքայի շերիֆ ու Էմիր Հուսեյն իբն Ալիի դերակատարությունը հայ տարագիրների հարցում և նրա ուղերձների նշանակությունը տարածաշրջանում: Անդրադարձ է կատարվում արաբական աշիրաֆների, անհատ անձանց, հասարակական գործիչների՝ հայ տարագիրների նկատմամբ ունեցած դիրքորոշմանը:*

*Մուշեղն ենթապլուխը՝ «Սեքքայի շերիֆ ու Էմիր Հուսեյն իբն Ալիի ուղերձները արաբների ցուցաբերած օգնությունը հայ տարագիրներին», ներկայացված է Սեքքայի շերիֆ ու Էմիր Հուսեյն իբն Ալիի դերակատարությունը հայ տարագիրների նկատմամբ արաբների ցուցաբերած դիրքորոշման հարցում:*

Որպես իսլամական հասարակություն՝ արաբների համար որոշիչ էր հոգևոր և աշխարհիկ առաջնորդի կարծիքը: Հարկ է նշել, որ 1914թ. նոյեմբերից Հուսեյնը մի քանի անգամ բացառական էր արտահայտվել երիթուրքական կառավարության՝ ջիհադ հայտարարելու պահանջի վերաբերյալ: Մակայն, երիթուրքական կառավարությունը մզկիթների և մաճուլի միջոցով հայտարարել էր, թե իբր Հուսեյնն օրհնել է ջիհադը: Հուսեյնի՝ շերիֆի պատվավոր տիտղոսը, Մուհամմադ մարգարեի անմիջական ժառանգ լինելու հանգամանքը, նրան ուղղված ջիհադ հայտարարելու պահանջը վկայում են նրա հոգևոր և քաղաքական մեծ հեղինակության մասին: Եվ ասես, արաբ ժողովրդի օգնությունը պաշտոնական բնույթ է ստանում Սեքքայի շերիֆ ու Էմիր Հուսեյն իբն Ալիի 1916թ. հունիսի և 1917թ. մարտի ուղերձներից հետո:<sup>60</sup> Բացի այդ, Շերիֆը 1917թ. ապրիլին իր որդի Էմիր Ֆեյսալին և Աբդ Ալ-Ազիզ Ալ-Ջարբային ուղղված հասույկ ուղերձ-հրովարտական պատգամել է օգնել ու աջակցել հայերին, պահանջել արաբական տեղական իշխանություններից պաշտպանել և հովանավորել իրենց մոտ հայտնված հայ տարագիրներին:<sup>61</sup>

<sup>59</sup> جان شرف، القضية الارمنية في السلطنة العثمانية، بيروت، 1997، ص 211-212

<sup>60</sup> المصادر العربية حول جريمة ابادة الارمن، بيروت، 1988، ص 11-26

<sup>61</sup> مروان الموار، الارمن عبر التاريخ، بيروت، 1982، ص 657

Հասկապես վերջին ուղերձ-հրովարտակը հայ տարագիրների համար բացառիկ կարևորություն ունեցող փաստաթուղթ է. այն օրենքի ուժ է ունեցել և հայ տարագիրների փրկության գործում մեծ դեր է կատարել:

Հատուկ անդրադարձ է կատարվել Հուսեյնի ուղերձների այն դրույթներին, որտեղ նա դատապարտում է հայերի նկատմամբ վարած երիտթուրքական քաղաքականությունը, ընդգծում իսլամի և երիտթուրքական գործողությունների հակասությունները: Հուսեյնը, հայերի հետ սլաւոսահաժողովաբան նախադեպ ընդունելով, կոչ է անում արաբներին խուսափել նույն մակաստագրից: Այդ կապակցությամբ նա հիշատակում է 1915թ. մայիսի 6-ին երիտթուրքերի կողմից արաբ ազգային գործիչներին մահապատժի ենթարկելու փաստը:

*Երկրորդ ենթագլուխը՝ «Միդիայի արաբական գեղախմբերի դիրքորոշումը և հայ տարագիրները»,* անդրադառնում է արաբական գեղախմբերի՝ աշիրաբների ունեցած դիրքորոշմանը, քանի որ 1915-1916թթ., առաջինը հայ տարագիրների հետ շփվում են անապատաբանակ արաբները:

Միդիայի հյուսիս-արևելյան շրջանների գեղապետերը, ելնելով իրենց ունեցած ազդեցությունից և հեղինակությունից՝ կարողացել են փրկել հայերին վերահաս կոտորածներից ու սպառտան սուլ: 1917թ. Սեփրայի էմիր ու շերիֆ Հուսեյն իբն Ալիի ուղերձի դրույթներն իրականացրել են Ալ-Ջաբբա գեղի առաջնորդները: Մըբյուրներն ու հուշագրությունները վկայում են, որ Կամիշլիի և սահմանակից տարածքի գեղերը՝ Տայ, Ալ-Ջաբուր, Ալ-Բակկառա նույնպես փրկել են հայերին: Իրենց օգնությունն են առաջարկել Ռաքբայի Ջաբիթ աշիրաբի առաջնորդ շեյխ Ֆադի Ալ-Ֆուսադը, Ռաքբայի շրջանում բնակվող Ալ-Աջեյլի ընտանիքը: Արաբական գեղախմբերի դրսևյան վերաբերմունքն է փաստել Ֆայեզ Ալ-Դուսեյնը:<sup>62</sup> Շատ են վկայություններն ու փաստերն այն մասին, որ հայ տարագիրների ամենաստվար զանգվածն սպաստանել է Անազե և Շամնար գեղախմբերի մոտ:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Փարիզի «Արձագանք» թերթում մի խումբ արաբ շեյխերի նամակն ուղղված քրիստոնյա աշխարհին, որտեղ նկարագրվում է հայերի իրական վիճակը սիրիական անապատներում:<sup>63</sup>

Արաբական գեղախմբերն ու նրանց առաջնորդները համագործակցել են հայախավար աշխատանքներ իրականացնող հայկական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Արդյունավետ համագործակցության դրսևորում է հայ տարագիրների տեղակորանն ու օգնության հարցերով զբաղվող դամիազի միսիոներ Կարեն Եփիեմի օրինակը: Հայերի տեղակորանն, ըստ Կ. Եփիեմի վկայության, իրականում էր սիրիական իշխանության նպաստավոր կեցվածքի, ինչպես նաև Անազե, Հադիդի, Բակկարա գեղախմբերի առաջնորդների աջակցության շնորհիվ:<sup>64</sup>

نعيم اليافي، مجازر الارمن وموقف الراي العلم العربي منها، اللاذقية، 1992، ص 68

<sup>62</sup> فلتز الغصين، المذابح في أرمينيا، ص 88.

<sup>63</sup> «Արձագանք Փարիզի», 10.06.1916:

<sup>64</sup> Չոլաքեան 3, նշվ. աշխ., էջ 53:

Արաբների հետ համագործակցում էին նաև անհատ հայեր, ովքեր անասպատկերում որբահավաք աշխատանքներով էին զբաղվում: Որբահավաք գործունեություն ծավալող հայերից կարելի է առանձնացնել Ռուբեն Հերյանին, ով արաբների շրջանում հայտնի էր Մուֆֆաթիչ Ալ-Արման /հայերի հետախույզ/ անունով: Հայաստանի Ազգային Արիփվում պահպանվել են Ռ. Հերյանի՝ Դեյր էզ-Չորի շրջանում հայ երեխաների, հիմնականում, աղջիկների ու կանանց ցուցակները, որտեղ նշված են երեխայի տարիքը, անունը, արաբական անունը, և ամենակարևորը՝ ցեղախմբի և այն անձի անունը, ում մոտ գտնվում էր երեխան: Նա կարողանում էր արաբական կողմի հետ համաձայնության գալով՝ հայությանը վերադարձնել տվյալ անհատին:<sup>65</sup> Չեյթունցի Փառնակ Շիշիկյանն, ով Միմեդ Ալ-Տազա անունը ժառանգել է իրեն որդեգրած արաբ ընտանիքից, նույնպես շրջել է անասպատկերով ու ցուցակագրել հայ երեխաներին: Այդ ցուցակներն ու աշիրաքների հավանական բնակավայրերի քարտեզներն ուղարկել է Հալեպ՝ հայահավաք գործով զբաղվող համապատասխան մարմիններին: Վերջիններս աշխատել են անասպատկերում՝ արաբ ցեղապետերին ևս մասնակից դարձնելով որբերի հավաքագրմանը:

*Երրորդ ենթագլխում՝ «Արաբ անհատ գործիչների վերաբերմունքը հայ տարագիրների նկատմամբ»,* անդրադարձ է կատարվել անհատ արաբներին, ովքեր կարողացել են օգտակար լինել հայ տարագիրներին:

Հայ տարագիրներին օգնություն ցույց տված արաբներից հարկ է հիշատակել Դեյր էզ-Չորի կառավարիչ Ալի Մուայդ բեյին: Մուայդ բեյը հայերին վրաններ է տրամադրել պատասխարկելու համար և կարճ ժամանակ անց հայերի արտոսվայրը վերածվել էր մեծ վրանաքաղաքի՝ կոչվելով վերջինիս անունով՝ «տուայդիյա»:<sup>66</sup> Հասնայում հայերի նկատմամբ բռնությունները որոշ չափով կանխվել են տեղի քաղաքապետ Նաջմ Ալ-Իմնի շնորհիվ: Վերջինիս նախաձեռնությամբ քաղաքում կազմված բարեգործական միությունը մեծապես օգնել է «սովամահ լինելուն դատասպարտված հարյուրավոր հայ տարագիրների»:<sup>67</sup>

Հայ տարագիրների նկատմամբ բարյացակամ վերաբերմունք են տածել Մուստաֆա Ջալափին, Ջամիլ Քենենն: Արբուլ Դաննի Ալ-Ջուդդին, Մամբուջ և Խալիլ գյուղերի կայմական Շաֆա Աբու Ռիշահը տարագրության տարիներին շրջանցում էին ի վնաս հայերի տրված հրահանգները և սպառնալից են շատ տարագիրների երկաթոտուղ տեղափոխմանը:

Արաբ շատ գործիչներ և անհատներ ծավալել են նաև հասարակական գործունեություն: Այս համատեքստում առանձնանում է Հալեպի Առևտրական սենյակի խորհրդական-անդամ, հետազայում՝ փոխմախազահ, ինչպես նաև Հալեպի պատգամավոր Սելիմ Չեմբեդթը, Հալեպի «Աթ-Թակադդում» բերքի խմբագիր Շուքրի Ռիզվալահ Քենեյերը: Արգենտինայում իրֆիհարական Թուրքիայի դեսպանը՝ ազգությամբ արաբ Արալան Ամիրը, ով նախկինում

<sup>65</sup> ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 35, ք. 7:

<sup>66</sup> بلموكيان ي، شهادة الأرمين، انطليس 1985، ص 32

<sup>67</sup> كيغرت، المؤلف روبرت جبه جيان، حلب، كتب السادس 2002، ص 63



քուրքական հյուպատոս է եղել Ֆրանսիայում և Բելգիայում, դատապարտել է հայերի կոտորածները և հեռացել պաշտոնից: Ըստ եուրյան, հայ-արաբական փոխհարաբերությունները շրջանցում են երիտօրոքական կառավարության ծրագրերի ասիմանները և ընթանում այլ ուղղությամբ:

Երրորդ գլուխը՝ «ԴԵՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԿԿՏՍՍՍՐ ԷՄԻՐ ՖԵՅՍՍԻԻ ԿՈՆՍՎԱՐՍԱՆԸ ՏԱՐԻՆԵՐԻՆ /1918-1920թթ./», բաժանված է երկու ենթագլխի, որտեղ անդրադարձ է կատարվում հայ տարագիրների նկատմամբ Սիրիայի անկախ կառավարության վարած քաղաքականությանը, 1919թ. փետրվարի Հալեայի դեսպերին:

Մուսջին ենթագլխում՝ «Ֆեյսայի քաղաքականությունը հայ տարագիրների նկատմամբ /1918-1920թթ./», ներկայացվում է Սիրիայի պատմության այդ ժամանակահատվածի իրադարձություններում Հուսեյնի որդի Ֆեյսայի ունեցած դերակատարությունը: 1918թ. հոկտեմբերի 5-ին Էմիր Ֆեյսալը կազմում է Սիրիայի առաջին անկախ կառավարությունը: Օսմանյան կայսրության տիրապետությունից ազատագրվելու գործընթացում արաբական կողմում ակտիվ մասնակցություն է ունեցել հայ տարագիրներից կազմված Արևելյան լեգեոնը: Վերջինիս գործունեությունը կարելի է համարել հայ-արաբական համագործակցության արդյունավետ դրսևորում, որի ապացույցը 1918թ. սեպտեմբերի 19-ին Արաբայի ուղղությանը ընդհանուր հարձակման ժամանակ Ռաֆաթի բարձունքում հայ լեգեոնականների հաղթանակն էր:

Ֆեյսալին հայանաչատ քաղաքականություն իրականացնելու գործում աջակցում էին խորհրդականներ՝ կրթության նախարար Սատի Ալ-Հուսրին, Ֆեյսայի քարտուղար, փաստաբան Ֆայեզ Ալ-Ղուսեյնը, Հալեայի շրջանի կառավարիչ նշանակված Շուքրի Ալ-Այուբին, Դամասկոսում հեղինակություն վայելող քաղաքական գործիչ Հաշիմ Ալ-Աթալին, Օսմանյան պատգամավոր Ֆարես Ալ-Խուրին, Օմար Ֆախուրին, ով Ֆեյսայի կողմից «Ալ-Ախիմա» պաշտոնաթերթի խմբագրման համար Բեյրութից հրավիրվելով Դամասկոս, այդ և ուրիշ թերթերում հաճախ է հանդես եկել արաբների նկատմամբ հայության բարեկամությունն անրասպնող հողավճանգրով:

1918թ. հոկտեմբերին Սահակ կաթողիկոսը հանդիպում է ունեցել Ֆեյսայի հետ՝ նրանից հավաստիացումներ ստանալով հայ տարագիրների հարցում արաբական կողմի հայանաչատ դիրքորոշման վերաբերյալ: Փարիզի Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Ֆեյսալին ուղղված նամակում բարձր է գնահատել վերջինիս հայանաչատ գործունեությունը:<sup>68</sup>

Հայ տարագիրներին ցուցաբերվող աջակցությունը նշված ժամանակահատվածում կատարվում է օրենքի և պաշտոնական հրամանների շրջանակներում: Ընդունվում են մի շարք որոշումներ, որոնց թվում էին 1919թ. հունվարին հայ տեղահանվածներին ամսականներ և սնունդ տալու մասին

<sup>68</sup> أريسين نورا، أصدأ الابادة الارمنية في الصحافة السورية، ص 271-272

կառավարության որոշումը,<sup>69</sup> Հալեայի հայ վաճառականների պարտքերի հետաձգման մասին 1919թ. մարտի 26-ի որոշումը:<sup>70</sup> Սեժ կարևորություն ունի նաև Ֆեյսալի՝ արաբների մոտ և աշիրաբներում գտնվող հայ որբերին, աղջիկներին ու կանանց հայտնաբերելու և հայկական ներկայացուցչական մարմիններին հանձնելու հատուկ հրահանգը:<sup>71</sup>

1919թ. հունվարին Էմիր Ֆեյսալը Փարիզում հանդիպել է Պողոս Նուբար փաշային՝ նրա հետ քննարկելով Սիրիայի հայ տարագիրների վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումները և հայ-արաբական հարաբերությունների հետ կապված որոշ հարցեր:

Ֆեյսալն ազգային փոքրամասնությունների նկատմամբ հատուկ քաղաքականություն է վարել՝ հայերին աջակցելը դարձնելով դրա կարևոր կետերից մեկը: 1919թ. մայիսի 9-ին Դամասկոսի կառավարական տանն արված պաշտոնական հայտարարությունում նա անդրադառնում է փոքրամասնությունների հետ հարաբերություններին:<sup>72</sup> 1919թ. հունիսին Ֆեյսալը, Հալեայի շրջանի ռազմական կառավարիչ Ջաֆար Ալ-Աբարիի ընկերակցությամբ այցելել է նաև Հալեայի հայոց առաջնորդարան, Հալեայի հայկական որբանոց, հանդիպում է ունեցել նաև Հայ ազգային միության<sup>73</sup> ղեկավարների հետ: Հայերը խնդրանքով դիմել են Շուքրի Ալ-Այուբին, ով աջակցել է կիլիկիահայերի թեթր հրատարակելու նախաձեռնությանը:

1920թ. ապրիլի 25-ին Ման-Ռեմոնի կոնֆերանսում ընդունված որոշման համաձայն Սիրիայի մանդատը հանձնվում է Ֆրանսիային: 1920թ. հուլիսի 24-ին Մայսալունի ճակատամարտն ավարտվում է ֆրանսիական կողմի հաղթանակով և Ֆեյսալը հեռանում է երկրից:

*Երկրորդ ենթագլխում՝ «1919թ. փետրվարի 28-ի Հալեայի դեպրերը»*

ներկայացվում են Հալեայի դեպրերի պատճառների և հրահրող կողմերի մասին տարբեր գիտական վարկածներ: Չնայած Էմիր Ֆեյսալի՝ հայ-արաբական հարաբերությունները բարելավելու քաղաքականությանը, Հալեայում տեղի են ունենում հայկական կոտորածներ, որոնց հետևանքով, ըստ «Կիլիկիա» թերթի /1919թ. մարտի 12 և 14 համարների/ սպանվել են 51, վիրավորվել շուրջ 100 և անհետ կորել 20-30 հայեր:

<sup>69</sup>Կառավարության սույն որոշումը տպագրվել է սիրիական կառավարության պաշտոնական պարբերաթերթ «Ալ-Մահմայի» 1919թ. փետրվարի 27-ի համարում: Sté 354 *أرسيين نورا، ضد الأبلدة الأرمنية في الصحافة السورية، ص 354*

<sup>70</sup>Խորհրդարանի սույն որոշումը տպագրվել է «Ալ-Մահմայի» 1919թ. ապրիլի 8-ի համարում.

*أرسيين نورا، ضد الأبلدة الأرمنية في الصحافة السورية، ص 356-358*

<sup>71</sup>*صفحت و وثلق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الأرمنية...، ص 321*

<sup>72</sup>Այի Մուրթանը Ֆեյսալի հանդիպման համար հիշատակում է մայիսի 5-ը: Stéսուն ամբողջությամբ տե՛ս

*سلطان علي، تاريخ سورية، حكم فيصل بن حسين، 1918- 1920 ص 442-431*

<sup>73</sup>1918թ. դեկտեմբերի 12-ին Հալեայում ստեղծվել է «Հայ ազգային միությունը», որը ղեկավարների 17-ին վերակազմավորվել և դարձել է «Կաղսականաց հանձնաժողով»:

Անդրադարձ է կատարվել դեպքերի մասնակիցներին ու հավանական նախաձեռնողներին, վերլուծվել է նման միջադեպի քաղաքական, տնտեսական պատճառները բրիտանական իշխանությունների կողմից այս դեպքերի կասկածնաբար հատուկ ստեղծված ռազմական դատարանի գործունեությունը: Այս իրողության մեջ պետք է թուրքական կողմին դիտարկել նախաձեռնող ու հրահրող կողմ, իսկ իրադարձությունների վերլուծության ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել թուրքական, անգլիական, ֆրանսիական և արաբական կողմերի մասնակցության փաստը:

Փարիզի Խաղաղության վեհաժողովին մասնակցելու մեկնած Ֆեյսալը իր եղբորը՝ Ջեյդին ուղարկված հեռագրում դատապարտել է միջադեպը:<sup>74</sup>

Հայ և օտար աղբյուրներում պահպանված նյութերի վերլուծությունները ցույց են տալիս, որ այդ դեպքերը ուղղված էին նաև Կիլիկիայի հայության դեմ: Ամենևին պատահական չէր, որ դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ հայերը զանգվածաբար ներգաղթում էին Կիլիկիա: Թուրքական կողմը նպաստել էր հետապնդում խոչընդոտել հայերի վերադարձը Կիլիկիա և նպաստել հայ-արաբական հարաբերությունների սրմանը: Վերջինիս համար առիթ է եղել «Ալ-Արաբ» թերթի<sup>75</sup> գլխավոր խմբագիր Սաաի Ալ-Սարրաջի՝ վիետրվարի սկզբներին գրված «Հայր և արաբը» խորագրով հոդվածը, որը տպագրվել է նրա՝ Մրանա կատարած շրջագայությունից հետո: Հոդվածում հայերի դեմ գրապարտանքներ էին ներկայացված:<sup>76</sup>

Հայեայի դեպքերը ճիշտ է, կարուկ չեն վատթարացրել հայ-արաբական հարաբերությունները, բայց, այնուամենայնիվ, որոշակի թշնամության և անվստահության մթնոլորտ են ստեղծել երկու ժողովուրդների հարաբերություններում, ինչը կարճ ժամանակահատվածում հարթվել է: Սակայն հայ-արաբական հարաբերություններում լարվածության ձևավորման վտանգը միշտ եղել է, որին կարող էին նպաստել անգլիական, ֆրանսիական և թուրքական կառավարությունները:

*Չորրորդ գլուխը՝ «ՀԱՅ ՍԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԻՆՏԵՐՈՒՄ: ՄԻՐԻԱՅԻ ՄՈՅԻՒԼ-ՏՆՏԵՆԱԿԱՆ ԵՎ ԶԳՆԱԿԱՆ ԿՅՈՒՆՈՒՄ /1920-1924թթ./»* բաժանված է երկու ենթագլխի, որտեղ ներկայացվում է հայ տարագիրների ինտեգրման գործընթացը Միդիայի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում:

*Մուսլին ենթագլխում՝ «Հայ տարագիրների սոցիալական վիճակի առաջնանական քարտեզավորում»*, քննության է ենթարկվում հայ տարագիրների ինտեգրման գործընթացը Միդիայի սոցիալական կյանքում, անդրադարձ է կատարվել գործընթացի դրսևորման միտումներին, հաջորդություններին և

<sup>74</sup> سلطان علي، تاريخ سورية، حكم فيصل بن حسين 1918 - 1920، ص 114

<sup>75</sup> 1918թ. աշնանը իթթիհարյական արաբների կողմից կազմակերպվել էր «Նադի Ալ-Արաբ»/«Արաբական ակումբ»/ ընկերությունը, որի օրգանն էր «Ալ-Արաբ» օրաթերթը:

<sup>76</sup> Նաջարյան Ե., Հայ-արաբական փոխհարաբերություններ Միդիայում, տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Երևան, 1974, հ. 6, էջ 154:

խոչընդոտներին: Այս ենթագլխում վերլուծվում է հայ տարագիրների ինտեգրումը Միդիայի սոցիալական կյանքում ընդհուպ մինչև 1924թ.:

Անդրադառնալով Միդիայի հայ տարագիրներին, հարկ է նշել, որ նրանք անցնում են ընդունող երկրում ինտեգրվելու մի քանի փուլեր: Հատկանշական է, որ եթե սկզբնական շրջանում աստեմափոսության մեջ առաջ քաշված հարցերն ու խնդիրները հիմնականում քննարկվում են արաբների կողմից հայ տարագիրներին ցուցաբերվող օգնության, ապա 1920-ական թվականների սկզբից՝ հայ-արաբական համագործակցության և փոխօգնության համատեքստում, զուգահեռ ներկայացվում են նաև ֆրանսիական մանդատային իշխանությունների ունեցած դերակատարությունն ու միջանորոգությունը Միդիայում հայ տարագիրների ինտեգրման և հայ-արաբական փոխհարաբերությունների գործընթացում:

Անդրադառնալով հայ տարագիրների իրավիճակին՝ առաջին հերթին պետք է հաշվի առնել մի կարևոր փաստ ևս, որ հայերը Միդիայում հայտնվում են մի ժամանակաշրջանում, երբ դեռ Առաջին համաշխարհային պատերազմը չէր վերջացել, իսկ Միդիան Օսմանյան կայսրության մաս էր: Բացի այդ, հայ տարագիրները ցեղասպանությունը վերապրելուց հետո առավել զգուշավոր էին դարձել ու անվտանգության հարցերին լուրջ էին վերաբերում:

Ֆրանսիական մանդատի տարիներին նկատում ենք, որ հայերի հանդեպ քաղաքականությունը մի քանի անգամ փոփոխության է ենթարկվում, այդուհանդերձ, ֆրանսիական մանդատային իշխանությունների դիրքորոշումը հայ տարագիրների նկատմամբ ընդհանուր առմամբ կարելի է դրական համարել:

Հատուկ անդրադարձ է կատարվել հայ տարագիրների վրանաքաղաքներից թաղանասեր տեղափոխվելու խնդրին: 1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրից հետո հայ տարագիրները կրկին առիպված էին Կիլիկիայից Միդիա վերադառնալ: Այս նոր իրողության մեջ փոխվում էր Միդիայում մնալու նրանց ձևաչափը: Նրանք սկսում են մշտական բնակության մասին մտածել, ինչը խթանում է նրանց ներգրավվածությունը Միդիայի սոցիալ-տնտեսական կյանքում: Հարկ է նշել, որ հայերի դերն աստիճանաբար զգալի էր դառնում առողջապահության, տնտեսության և մի շարք այլ կարևոր ոլորտներում:<sup>77</sup> Այդ հանգամանքը պատճառ էր դառնում արաբական կողմի դժգոհություններին: Արաբների մի մասը հակված էր այն տեսակետին, որ հայ տարագիրները, հայտնվելով Միդիայում, նպաստում էին աշխատավարձերի նվազեցմանը և գործազրկության աճին:

Այս դժգոհություններն իրենց արձագանքն են գտել նաև Միդիայի Դաշնային խորհրդի<sup>78</sup> 1924թ. հունվարի նիստում: Հպեալի պատգամավոր

<sup>77</sup>Ասադյան Ե., Հայ-արաբական փոխհարաբերությունները Միդիայում, տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 6, էջ 136:

<sup>78</sup>1922թ. հունիսի 28-ին Ֆրանսիական գլխավոր կոմիսար Գուրոն հատուկ դեկրետով ստեղծում է «Միդիական ֆեդերացիա», որի մեջ մտնում են Դամասկոսի, Հպեալի և Ալալիների պետությունները: 1924թ. դեկտեմբերին Գլխավոր կոմիսար Վեյզանը լուծարել է Դաշնային ֆեդերացիան:

Սելին Չեմբերքը, Դաշնային խորհրդի նախագահ Սուբիի Բարաքաթը փորձել են հիմնասկզբել, որ նշված փաստարկները չեն համապատասխանում իրականությանը և երկրի շահերին: Հայ տարագիրները նույնպես գիտակցում էին արաբների դժգոհությունների փաստարկներն ու փորձում էին ավերորդ լարվածություն չմտցնել հայ-արաբական հարաբերություններում:

Միրիայում հայ տարագիրների համար կարևոր նշանակություն ուներ նրանց իրավական կարգավիճակի հարցը, որի լուծմանը հետաձուտ էր Ազգերի լիգայի գաղթականության հարցերով բարձրագույն կոմիսար Ֆ. Նանսենը: Այս խնդրի լուծման գործում կարևոր նշանակություն ունեցան «Նանսենյան անձնագրերը»: Ազգերի լիգայի խորհուրդը 1924թ. հունիսի 12-ի որոշմամբ հաստատում է Նանսենի նախածնունդները հայ գաղթականներին ինքնության վկայագրեր տալու վերաբերյալ: 1924թ. օգոստոսի 1-ին հրապարակվում է Միրիայի քաղաքացիության օրենքը: Հինգ տարի անընդմեջ Միրիայում բնակվող անձանց շնորհվում էր քաղաքացիության իրավունք, որով վերջ էր տրվում նախկին օսմանահպատակ հայ տարագիրների անորոշ իրավական դրությանը:<sup>79</sup> Այս ենթագլխում ներկայացվում է այդ գործընթացը, որի հետևանքով հայ տարագիրներն ու տեղի հայ բնակչությունն աստիճանաբար վերականգնվում են սիրիահայ համայնքը: Անդրադարձ է կատարվում համայնքի առջև ծառայած ազգային ինքնագիտակցության, մշակույթի և լեզվի պահպանման խնդիրներում եկեղեցու, հասարակական կազմակերպությունների, հայրենակցական միությունների, ուսումնական հաստատությունների ունեցած դերին:

Ենթագլխում ներկայացված են նաև հայ տարագիրների թվաքանակի փոփոխությունները նշված ժամանակահատվածում. 1918-1924թթ. Միրիայում հայերի թիվը նվազել է՝ 150 հազարից հասնելով 90 հազարի:

*Երկրորդ ենթագլխում՝ «Հայ տարագիրների ինտեգրումը Միրիայի քաղաքական կյանքում»*, անդրադարձ է կատարվում հայ տարագիրների քաղաքական ինտեգրման գործընթացին, ընդ որում, միայն 1920-ական թվականների սկզբից կարելի է խոսել քաղաքական ինտեգրման մասին, քանի որ այս ոլորտում հայ տարագիրներին ժամանակ էր հարկավոր իրավիճակին համակերպվելու, քաղաքական դաշտը և նրա կանոնները յուրացնելու համար:

Ստեղծված քաղաքական պայմաններում ակտիվ գործունեություն են ծավալում հայ ազգային քաղաքական կուսակցությունները: Քաղաքական բևեռացումը կատարվում է մի կողմից Սոցիալ-դեմոկրատ հնչակյան և Ռամկալար ազատական կուսակցությունների, մյուս կողմից էլ Հայ Հեղափոխական Դաշնակցության միջև: 1920թ. Հայաստանի խորհրդայնացման փաստը տարակարծություններ է առաջացնում հայ քաղաքական կուսակցությունների միջև: Հնչակյան կուսակցությունը ձգտում էր հասնել նրան, որ սփյուռքում Հայաստանի խորհրդայնացումը դիտվի հայ ազգի համար մեծ ձեռքբերում: Ռամկալարները կողմնակից էին, որ մուսուլմանական երկրներում բնակվող հայ տարագիրները չմիջամտեն երկրի քաղաքական գործերին, դրական հարաբերություններ ունենան տեղի

<sup>79</sup>Թովուզյան Հ., նշվ. աշխ., էջ 178:

բնակիչների հետ:<sup>80</sup> Հայ Հեղափոխական Դաշնակցությունը կուսակցությունը ցանկանում էր սկյութաքահայությանը կազմակերպել որպես քաղաքական ուրույն միավոր և հակադրել Խորհրդային Հայաստանին:

Հայ տարագիրները քաղաքական ոլորտում միայն ազգային կուսակցությունների գործունեությամբ չեն սահմանափակվում: Նրանք դուրս են գալիս ներհամայնքային գործունեության շրջանակներից: Համագործակցելով արսբ համախոհների հետ՝ նրանք Սիրիայում հիմնում են կոմունիստական կուսակցությունը: Հ. Մառեսյանի նախաձեռնությամբ 1923թ. սկզբին Հնչակյան կուսակցության երիտասարդական կազմակերպությունում ստեղծվում է «կոմունիստական բջիջ», որի հիմքի վրա 1924թ. առաջանում է «Սպարտակ» կոմունիստական խումբը: Սիրիայի հայ կոմունիստները նախաձեռնողի դերն են ստանձնում միավորելու տեղի Կոմունիստական կուսակցությունը:

1924թ. հայ տարագիրների քաղաքացիություն ստանալու փաստն արաբների կողմից միանշանակ չէր ընդունվում, քանի որ Ֆրանսիայի համար սա նշանակում էր, որ նրանք կարող են հայերի հետ համագործակցությունը պայտռոնապես քաղաքական ոլորտ տեղափոխել: Հետևաբար, հայերը կարող էին ֆրանսիական կողմին աջակցել իրենց քվեներով:

Մյուսամենայնիվ, հայ քաղաքական կուսակցություններն առանձին դեպքերում կարողանում են վեր կանգնել կուսակցական շահերից՝ գիտակցելով ազգային միասնականության կարևորությունը:

**Եզրակացությունում** հանրագումարի են բերվել աշխատանքի հիմնական արդյունքները, որոնք բխում են առաջադրված խնդիրների պարզաբանումներից:

- Սիրիա հասած հայ տարագիրները մինչև քաղաքացիություն ստանալն ու կազմակերպված համայնքի վերածվելը մի քանի փուլ են անցել: Սկզբնական շրջանում նրանք ցանկություն չունեին ինտեգրվել Սիրիայի հասարակական-քաղաքական գործընթացներին: Նրանք մեկուսացած էին, արաբական միջավայրը նրանց համար խոթք էր, իսկ Սիրիան համարում էին ժամանակակիոր բնակության վայր: Տարագիրները ցուցաբերում էին իրենց այդ շրջանի իրավիճակին բնորոշ վարքագիծ:

- Արաբների վերաբերմունքը հայ տարագիրների նկատմամբ չի կարելի միանշանակ դրական համարել, քանի որ երկկողմ հարաբերություններում եղել են նաև հակասություններ, ընդհարումներ և խնդիրներ, սակայն դրական միտումներն ուսումնասիրության մեջ գերակշռող են:

- Սիրիայի արաբների դիրքորոշումը հայ տարագիրների նկատմամբ կրել է որոշակի փոփոխություններ՝ կապված ժամանակի աշխարհաքաղաքական իրողությունների հետ: Ժամանակ առ ժամանակ արաբների օգնությունն առավել կամ պակաս աշխուժությամբ է իրականացել, բայց չի դադարեցվել ու ընդհատումներ չի ունեցել:

---

<sup>80</sup> Կալլաքյան Կ., Ռամկավար-Ազատական կուսակցության սրատմություն, 1921-1940, Երևան, 1999, էջ 69:

- Սիրիայում հայ որբերին, կանանց և, ընդհանրապես, հայ տարագիրներին փրկելու գործընթացում անհատ գործիչները, ինչպես նաև հայկական և միջազգային կազմակերպությունները, հիմնականում հասագործակցել են արաբների հետ՝ ստանալով վերջիններիս աջակցությունը:

- Ուսումնասիրվող ժամանակաշրջանում արձանագրվել է նաև հայ-արաբական զինվորական հասագործակցություն:

- Հայ տարագիրների համար կարևոր նշանակություն է ունեցել Սեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալիի 1917թ. ուղերձ-պատգամը՝ վերջիններիս աջակցելու մասին, որն ուղղորդող նշանակություն է ունեցել հայ տարագիրներին արաբական աշխարհում աջակցելու գործում:

- Յեղապետերի և, ընդհանրապես, արաբ աշիրաթների /ցեղախմբերի/ աջակցությունը հայ տարագիրների փրկության հարցում պետք է դիտարկել երկու համատեքստում: Առաջինն անմիջական օգնությունն էր՝ այսինքն՝ ցեղապետի հրամանով փրկել, ապաստան ու սնունդ տալ և երկրորդ՝ միջնորդակողմած տարբերակը, երբ արաբ բեդվինները, տեղյակ լինելով տեղանքին ու հայ տարագիրների գտնվելու վայրերին, օգնում էին հայ որբերին ու կանանց հայտնաբերելու ու հայկական միջավայր վերադարձնելու գործով զբաղվող անհատներին և կազմակերպություններին:

- 1918թ. Սիրիայում Ֆեյսալ թագավորի իշխանության տարիներին /1918-1920/ անհատ արաբների ցուցաբերած օգնությանը զուգահեռ տարագիրների նկատմամբ աջակցությունն իրականացվել է նաև պաշտոնական մակարդակով: Կարելի է ասել, որ Սիրիայի արաբների աջակցությունը հայերին առավել ակտիվ է ընթացել 1919 թվականին, երբ կառավարական հատուկ որոշումներ են ընդունվել:

- Նշված ժամանակահատվածում հայ-արաբական փոխհարաբերությունները հարթ չեն ընթացել: Եղել են նաև լարված իրավիճակներ, որի ապացույցներից մեկը 1919թ. փետրվարի 28-ի Հայեպի դեպքերն են: 1920-ական թվականների սկզբներին, սիրիացիների շրջանում սկիզբ առած հակաֆրանսիական շարժումներին զուգահեռ, հայ տարագիրներն արաբ ազգայնականների կողմից շատ դեպքերում, երբեմն ճշմարտացիորեն, ընկալվել են որպես ֆրանսիացիներից հովանավորվող և նրանց հետ համագործակցող ժողովուրդ: Այդ իրողությունները թեև արմատապես չեն վատթարացրել հայ-արաբական հարաբերությունները, բայց, այնուամենայնիվ, որոշակի թշնամություն և անվստահության մթնոլորտ ստեղծել են երկկողմ շփումներում: Պայմանավորված տարածարջանում սեփական աշխարհաքաղաքական շահերով՝ հայ-արաբական հարաբերություններում լարվածության առաջացմանը նպաստել են սկզբում երիտթուրքերը, հետագայում՝ անգլիական և ֆրանսիական մանդատային իշխանությունները:

- Հայկական և արաբական կողմերը նշված ժամանակահատվածում ցուցաբերել են փոխադարձ զգուշավորություն, որն ուներ իր հիմնավոր պատճառները: Երիտթուրքերի իրականացրած ցեղասպանությունը հայերին իսլամական միջավայրում դրդում էր զգուշավորության: Սիրիայի արաբներն, իրենց հերթին, քաղաքական նկատառումներից ելնելով, զգուշանում էին հայ

տարագիրներից, քանի որ հայերը ֆրանսիական իշխանությունների կողմից կարող էին օգտագործվել արաբների դեմ վերջիններիս ազգային-ազատագրական պայքարի ժամանակ:

- Այնուամենայնիվ, հայ տարագիրները կարողացել են ճիշտ կողմնորոշվել՝ տարբերակելով ազգն անհատից, անհատների պարագայում եղել է որոշակի թշնամություն, բայց ազգային մակարդակում, չնայած կրոնական տարբերությանը, պատերազմական իրավիճակին, իսկ հետագայում նաև տնտեսական ծանր դրությանը, ցեղասպետերը, տեղական ու կենտրոնական իշխանությունները քայլեր են ձեռնարկել հայ տարագիրների իրավիճակի բարելավման ուղղությամբ: Որոշակի տարածայնությունները, ինչպես նաև երիտթուրքերի և ֆրանսիացիների հրահրած ընդհարումները չեն արժեզրկել կամ նվազեցրել արաբների՝ հայ տարագիրներին ցուցաբերած աջակցության կարևորությունը:

- 1921թ. Անկարայի պայմանագրից հետո հայ տարագիրները հիմնականում բացառել են հայրենիք վերադառնալու մտադրությունը և նպատակադրվել են Միդիայում մշտական բնակություն հաստատել՝ աստիճանաբար վերածելով կազմակերպված համայնքի:

- Հայ տարագիրները Միդիայում մշակութային, տնտեսային և քաղաքականապես ինտեգրվելու տարբեր միջոցառումներ են ձեռնարկել, ինչը հնարավոր էր փոխադարձ առապուստյանի դեպքում:

- Արաբական և ֆրանսիական կողմերը տարագիրներին սկսում են ընկալել որպես տարածաշրջանում բնակություն հաստատող, կարևոր դերակատարություն ձեռք բերող համայնք: Այդ իսկ պատճառով արաբական և ֆրանսիական կողմերից յուրաքանչյուրն աշխատում էր բաց չթողնել հայերին իր կողմը գրավելու հնարավորությունը: «Հայկական հենարանը» գործուն աստիճանաբար կարևորություն էր ձեռք բերում, որի պատճառով հայ տարագիրները շատ դեպքերում երկրնորանքի առջև էին կանգնում: Գիտակցելով իրավիճակի բարդությունը և հաշվի առնելով արաբ ժողովրդի ցուցաբերած օգնությունը՝ նրանք աշխատել են հնարավորինս չեզոքություն պահպանել արաբա-ֆրանսիական հարաբերություններում:

- Հայ տարագիրների համար կարևոր էր Միդիայում 1924թ. իրավական կարգավիճակ ստանալու փաստը: Այն հայ տարագիրների համար շրջադարձային կետ էր, որը նրանց տանում էր դեպի լիակատար ինտեգրում: Հայ տարագիրների ինտեգրման գործընթացն, ընդհանուր առմամբ, կարելի է արդյունավետ համարել:

- Կարելի է եզրակացնել, որ հայ և արաբ ժողովուրդները կարողացել են հարթահարել անցումային տարիների դժվարություններն ու բարդությունները, ինչը նպաստել է սիրիահայ համայնքի վերածնալիքում:

- Միդիահայ համայնքը ազգային գործունեությունը կազմակերպել և կարգավորել է համայնքային հաստատությունների՝ եկեղեցական, ազգային կուսակցական, կրթական և մշակութային համակարգի միջոցով: Հայ-արաբական համատեղ ջանքերով հայ տարագիրներն աստիճանաբար վերածվում են կազմակերպված և կենսունակ համայնքի: Հայերը ձգտում են ոչ միայն պահպանել իրենց ազգային ինքնությունը, այլ ներդրում ունենալ նաև



Միրիայի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում՝ որոշակի դիրքեր զբաղեցնելով նաև Միրիայի իշխանական համակարգում:

Ատենախոսության առանձին հարցեր ու հիմնադրույթներ ներկայացվել են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. Արաբական աշխարհի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում. Սեփրայի Շերիֆ ու Էմիր Ալ Հուսեյն իբն Ալիի ուղերձները, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Երևան, 2005, հ.10-11, էջ 158-170:
2. Արաբների վերաբերմունքը Միրիայում հաստատված հայ որբերի նկատմամբ, Սերձավոր Արևելք-III, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հողվածների ժողովածու, Երևան, 2006, էջ 101-105:
3. Հայ տարագիրները Միրիայում և արաբների վերաբերմունքը նրանց նկատմամբ, Սերձավոր Արևելք-VI, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հողվածների ժողովածու, Երևան 2009, 153-159:
4. Հայ տարագիրների մասնակցությունը Միրիայի քաղաքական կյանքում 1920-1925թթ., Սերձավոր Արևելք-VII, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հողվածների ժողովածու, Երևան, 2011, էջ 183-189:

МАРГАРЯН НАРИНЕ ВЛАДИКОВНА

ДЕПОРТИРОВАННЫЕ АРМЯНИ В СИРИИ И АРМЯНО-  
АРАБСКИЕ ВЗАИМООТНОШЕНИЕ (1915-1924 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 – “История Армении”  
Защита состоится 7-го октября 2011 г., в 14<sup>00</sup> по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4 на заседании специализированного совета 004 при Институте Истории НАН РА

РЕЗЮМЕ

Изучение вопроса депортированных армян в Сирии и армяно-арабских взаимоотношений (1915-1924гг.) имеет важное политическое и научное значение. Тема является актуальной с точки зрения более глубокого осмысления как Геноцида армян, так и современной истории армянских общин на Ближнем Востоке, в частности, в Сирии.

Значимость данного исследования заключается также в том, что введение в научный оборот новых фактов может способствовать процессу международного признания Геноцида армян. В этом отношении особенно важными являются арабские свидетельства. Изучение последних может способствовать не только усилению фактической базы Геноцида армян исламскими, точнее, арабскими первоисточниками, но и воспрепятствованию политике отрицания факта геноцида со стороны Турции.

Осмысление отношения арабов к депортированным армянам в годы Геноцида армян может расширить представления в Армении об арабском мире, также послужить толчком для оживления армяно-арабских отношений на разных уровнях.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и библиографии. Во введении обосновывается актуальность, теоретическая и практическая значимость темы, а также её научная новизна, определяются цели, задачи и методология исследования, делается краткий обзор использованной литературы.

Глава 1. “Поток депортированных армян в Сирию и отношение арабов” посвящена изучению положения первых групп депортированных армян, достигших сирийских пустынь, их взаимоотношений с местным арабским населением, работ, проводимых по нахождению и сбору армянских сирот и женщин, усилий по возвращению женщин и детей в армянскую среду и по созданию приютов, участия арабского населения в этих работах, а также вопросу арабизированных армянских женщин и детей. В главе также рассматривается проблема отдельных случаев негативного отношения и применения насилия со стороны арабского населения.

Глава 2. “Отношение арабов Сирии к депортированным армянам и послания Шерифа и Эмира Мекки Ал-Хусейна ибн Али” посвящена посланиям Шерифа и Эмира Мекки Ал-Хусейна ибн Али в июне 1916 года и в марте 1917 года. Кроме указанных посланий, специальным манифестом-

посланием, изданным в апреле 1917 года, Шериф обратился к своему сыну Эмиру Фейсалу и Абд Ал-Азизу Ал-Джарбайу с просьбой помогать армянам, а также с требованием к местным властям защищать армян, оказавшихся на их территориях.

В главе рассматривается вопрос отношения арабских племен – аширатов, к депортированным армянам. Известно, что предводители племен на северо-востоке Сирии, обладая значительным влиянием и авторитетом, смогли спасти много армян от неизбежной смерти и приютить их. Кроме того, арабские племена и их предводители сотрудничали с представителями армянских и международных организаций а также с отдельными лицами, работавшими по направлению сбора армянских сирот и женщин в пустыне.

Диссертационная работа также обсуждает отношение отдельных арабских деятелей к депортированным армянам. Среди арабов, оказывающих помощь армянам, особо отличились губернатор Дейр Эз-Зора Али Суайд бей и градоначальник Хамы Наджым Ад-Дина, по инициативе которого в городе была основана благотворительная организация. Благожелательное отношение к армянским эмигрантам имели также Мустафа Джалابي и Дхамил Кенне. Абдул Ганни Ал-Джудди и каймакам сёл Мамбудж и Халил Шафа Абу Риша в годы выселения оказывали выполнять анти-армянские приказы.

Глава 3. “Отношение к депортированным армянам во время правления Эмира Фейсала (1918-1920гг.)” посвящена политике независимого правительства Сирии по отношению к ним. В этом разделе работы, в частности, рассматривается политика Эмира Фейсала по отношению к депортированным армянам. Констатируется факт, что помощь армянам являлась одной из основных элементов его политики, и что эта помощь осуществлялась согласно закону, в рамках официальных приказов и постановлений, послуживших гарантией для спасения депортированных армян и их скорейшего возвращения в жизнь общины. В главе уделяется внимание событиям в Алеппо 28-ого февраля 1919 года, причинам этого происшествия, анализируются предшествующие события, а также последствия напряженных взаимоотношений между арабами и армянами.

Глава 4. “Интеграция депортированных армян в социально-экономическую и политическую жизнь Сирии (в 1920-1924 гг.)” посвящена процессам, в ходе которых депортированные армяны интегрировались в социально-экономическую и политическую жизнь Сирии и стали полноценными гражданами этой страны. В главе обсуждаются тенденции, успехи и препятствия процесса интеграции депортированных армян в социальную жизнь Сирии, освещается деятельность армянских национальных политических партий в Сирии с начала 20-х годов, включая роль некоторых армянских деятелей в работах по основанию коммунистической партии. Особое внимание уделяется факту получения депортированными армянами в 1924г. юридического статуса, что явилось основой для их полной интеграции в стране.

В Заключении обобщаются основные выводы и положения, выносимые на защиту.

MARGARYAN NARINEKIDALV  
“ARMENIAN DEPORTEES IN SYRIA AND ARMENIAN-ARAB RELATIONS  
(1915-1924)”

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of “History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on October 7, 2011, 14<sup>00</sup>, at the session of the Specialized Council 004 by the Institute of History, NAS, RA. (Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4)

SUMMARY

The research of the “Armenian Deportees in Syria and Armenian-Arab Relations (1915-1924)” topic has both scientific and political significance. This topic is important not only for in depth analyses of the Armenian Genocide, but also for the study of the history of Armenian communities in near east, and particularly, the modern history of Armenian community in Syria. The study of this topic is fostering the process of international recognition of Armenian genocide putting new facts into scientific circles. The accounts of Arab witnesses are important part of this process. The in depth analyses of those facts are facilitating the research of Armenian Genocide through Islamic, and more particularly Arab sources, as well as supporting to counter the Turkish denial policy.

The study of Arab approach to the Armenian deportees may be helpful to enhance the understanding of Arab world in Armenia and could foster the Arab-Armenian relations in several sectors.

The PhD thesis consists of Introduction, four chapters, conclusion and bibliography. Introduction illustrates the importance of the thesis, its aims and subjects, theoretical and practical aim of the thesis. It also includes the bibliography review, the methodical base and scientific novelty.

The first chapter of thesis “The Influx of Armenian Deportees into Syria and Arab Treatment” consists of two sub chapters.

The first sub chapter “The First Groups of Armenian Deportees in Syria” depicts the first stage of relations between Armenian deportees and Arabs, second sub chapter “The Orphan gathering, the Women Conscripted and the Foundation of Sanctuaries” mainly focused on the gathering of Armenian orphans and women, the steps towards getting them back into the Armenian life and the participation of Arabs in that process. The issue of arabized orphans and women also is discussed. The cases of negative treatment of Armenians and violations against them by Arabs are also discussed; meanwhile it’s worthy to mention that those cases are mainly occurred in person to person relations.

The second chapter “The Syrian Arabs Approach towards Armenian Deportees and Mecca’s Sharif and Emir Al-Hussein Ibn Ali’s Messages” consists of three sub chapters.

The first sub chapter “The Mecca’s Sharif and Emir Al-Hussein ibn Ali’s Messages and Arabs’ Assistance to the Armenian Deportees” focused on the Al-Hussein ibn Ali’s two messages in June 1916 and March 1917. Besides these messages Al-

Hussein issued special message to his son Emir Feysal and Abd Al-Aziz Al-Jarba urging them to support Armenians and demanding from local Arab authorities to defend and protect Armenians in their provinces.

Second sub chapter “The Syrian Arab Tribes’ Stance and Armenian Deportees” depicts the Arab tribes’ (ashirats) stance. The Chiefs of tribes in North East provinces of Syria using their influence and authority were able to save Armenians from massacrred and gave them asylum. They also co-opt with representatives of Armenian and international organizations dealing with gathering of Armenians. Some Armenian persons involved in orphans gatherings activities also co opted with Arabs.

The third sub chapter “The Arab Statesmen’s Approach toward Armenian Deportees” focused on some statesmen’s assistance to Armenians. It’s worthy to mention Governor of Deyr El Zour Ali Suayd Bey, Hama Mayor Najm Ad-Din. The latter initiated the foundation of benevolent union in the town. Mustafa Jalabi, Jamil Kenne also had pro-Armenian stance. Abdul Ghanni Al-Juddi, the Kaymakam of Mambuj and Khalil villages Shafa Abu Rishah ignored the anti-Armenian orders received during deportations.

The third chapter “The Approach toward Armenians During Emir Feysal’s Rule (1918-1920)” consists of two sub chapters and depicts the independent Syrian government’s policy toward Armenian deportees.

The first sub chapter “Emir Feysal’s Policy toward Armenian Deportees” focused on Feysal’s policy toward national minorities. The support of Armenians was one of the cornerstones of his policy. The assistance to Armenians was based on law and official decisions which brought their input into the overall process of deportees’ survival and return to the Armenian life.

The second sub chapter “The 1919 February 28 Aleppo Incidents’” analyses the main reasons of that incident, the previous events and the implications of tensions in Arab-Armenian relations.

The fourth Chapter “The Integration of Armenians in Syria’s Social-Economic and Political Life (1920-1924)” consists of two sub chapters and analyses the process of integration as a result of which Armenians were integrated into Syria’s social-economic and political life and became the full fledged citizens of Syria.

The first sub chapter “The Eventual Improvement of Armenian Deportees’ Social Conditions” focused on the integration of Armenian deportees in to the social life of Syria. The obstacles as well as successes of the process are analyzed.

The second sub chapter is titled “The Integration of Armenian Deportees into the Syrian Political Life”. This process has started at the beginning of 1920s. In sub chapter are analyzed the activities of Armenian political parties as well as Armenian political figures, who founded the Syrian Communist party. The clarification of legal status of Armenians in 1924 is considered as an important step toward their full integration into the Syrian political life.

Conclusion summaries the main results of the thesis based on the clarifications of main problems.